ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Նալբանդյան 28, հեռ. 583 734

N - _____

«05 » մայիսի 2018թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Դատավորի լիազորությունները դադարելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսունհինգ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե լրացել է նրա 65 տարին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով դատավորի պաշտոնավարումը դադարում է նրա 65 տարին լրանալու օրվանից»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով դատավորի լիազորությունների դադարման դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում»:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նելլի Գալստյանի 65 տարին՝ լիազորությունների ժամկետը, լրանում է 2018 թվականի մայիսի 20-ին:

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ